

# Փառատոն՝ նվիրված Ռուսաստանի Օրվա տոնակատարությանը

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Եզրաս Ներսիսյանի օրհնությամբ, բարեհաճությամբ և հովանավորությամբ Հմայակ Գևորգյանի ղեկավարությամբ և Տեր Առաքել Ամիրյանի աջակցությամբ Մոսկվայում գործում է "Հայորդյաց տուն" հոգևոր-լուսավորչական հայեցի դաստիարակության կենտրոնը, ուր հաճախում են շուրջ 700 հոգի:

Այստեղ հայ պավակները կիրակնօրյա դպրոցում մեծ ցանկությամբ սովորում են իրենց մայրենի լեզուն, ուսումնասիրում Հայաստանի և հայ եկեղեցու պատմությունը: Նրանք հաճախում են գեղարվեստական ինքնագործ խմբերի, սպորտային սեկցիաների պարապմունքներին, կազմակերպում համերգներ, կոնկուրսներ, պանապան մրցումներ և այլ հետաքրքիր ու գրավիչ միջոցառումներ:





Իրենց կատարողական վարպետությամբ լայնորեն հայտնի են Արմինե Ամիրյանի ղեկավարած "Հայասա" և Էդգար Ավետիսյանի ղեկավարած "Ակունք" համույթները, որոնք հաջողությամբ ելույթներ են ունենում Ռուսաստանի հայաբնակ վայրերում:

Եվ ահա հունիսի 12-ին, նրանք ժամանեցին Չալթր ու մասնակցեցին Ռուսաստանի Օրվա տոնակատարությանը նվիրված հայ մշակույթի փառատոնին: "Հրապղան" կինոհամերգային դահլիճում նրանց միացավ նաև դոնահայերի Գրիգոր Խաթլամաջյանի ղեկավարած "Անի" համույթը: Հայ արվեստի այդ նվիրյալները միասին արվեստասերներով լեփ-լեցուն դահլիճում ճոխ համերգ տվեցին և հոգեկան մեծ բավականություն պատճառեցին ներկաներին:

Տոնական արարողությունն սկսվեց համերգավարուհի Աննա Գրիգորյանի բացման խոսքով: Ապա Ռուսաստանի Պետական Հիմնի հաղթաշունչ հնչյունների ներքո ցուցադրվեց երկրի հերոսական պատմությունը ներկայացնող կինոնկար, որը մարդիկ դիտեցին հոտնկայս:

Մյասնիկյանի շրջանի վարչապետի տեղակալ Նավիկ Քեշիշյանը ջերմորեն ողջունեց հյուրերին և տոնակատարության մյուս մասնակիցներին, որոնց թվում էին նաև շրջանի վարչապետի տեղակալ Վալենտինա Խաթլամաջյանը, կուլտուրայի շրջանային բաժնի պետ Մանուշակ Չուբարյանը, քահանաներ Տեր Թադևոս Հայբարյանը, Տեր Անանիա Բաբայանը, Տեր Թադևոս Ավագյանը, Տեր Պողոս Տերտերյանը, Տեր Տիրան Ավագյանը: Ողջունի խոսքեր ասացին նաև Տեր Թադևոս Հայբարյանը և Տեր Անանիա Բաբայանը:

Հունիսի 13-ին մոսկվացի հյուրերը համերգ տվեցին Դոնի Ռոստովի երաժշտական թատրոնի դահլիճում:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Լուսանկարները՝ Վ. ԽՈՉԿԻՅԱՆԻ



*Նավիկ Քեշիշյանը և Տեր Թադևոս Հայբարյանը համերգի մասնակիցներին հանձնեցին շնորհակալագրեր և նվերներ:*



